3.08.2021
347-84

ՀՀ Շրջակա միջավայրի
նախարարի պաշտոնակատար
Ռոմանոս Պետրոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պետրոսյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2. 1 մասի՝ 2022 թվականի հունվարի 1-ից առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, այդ թվում՝ շրջիկ առևտրի կետերում, կարգելվի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման և երկրորդային հումքից արտադրվածների) վաճառքը և իրացումը: Արդյո՞ք կատարվել կամ կատարվում են համապատասխան աշխատանքներ/միջոցառումներ տնտեսվարողներին և բնակիչներին պատճշած իրազեկելու նպատակով:
2. Եթե այո, խնդրում ենք կոնկրետ նշել, թե ինչպիսի իրազեկման աշխատանք է իրականացվում այժմ և ինչ միջոցներով:
3. Եթե իրազեկման համապատասխան աշխատանքներ/միջոցառումներ դեռևս չեն իրականացվում, արդյո՞ք պլանավորված են նման աշխատանքներ: Եթե այո, տեղեկացրեք կոնկրետ ժամկետների և ձևաչափի մասին՝ երբ և ինչպես եք նախատեսում իրականացնել իրազեկման աշխատանքներ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am